ԳԱԲՐԻԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Մ. Հ. ՄԵԼԻԹԱՐՅԱՆ

Գաբրիել Պատկանյանն իր գրական-մանկավարժական և հասարակական գործունեությամբ խոր հետք է թողել մեր մշակույթի պատմության մեջ։ Որտեղ էլ որ աշխատել է նա, Աստրախանում, Նոր Նախիջևանում, թե Թիֆլիսում, մշտապես գտնվել է տեղերի հասարակական կյանքի կիզակետում, մեծապես նպաստել ազգի բարոյական առաջընթացին ու համաքաղաքացիների նյութական բարօրությանը։ Պատկանյանն Աստրախանում կոնսիստորիայի ատենադպիր էր և հայոց հոգևոր դպրոցի ուսուցիչ, Նոր Նախիջևանում գործունյա քահանա էր, հոգևոր կառավարության քարտուղար, ուներ իր մասնավոր դպրոցը, որի շրջանավարտներից մի քանիսը հետագայում դարձան մշակութային և ազգային նշանավոր գործիչներ։ Թիֆլիսում Պատկանյանը դարձյալ զբաղվում է մանկավարժական աշխատանքով, նախ մասնավոր ուսումնարանում, ապա Ներսիսյան դպրոցում, որի սաները երկար տարիներ սիրով ու երախտագիտությամբ էին հիշում եվրոպական մշակույթի և գրականության նրա խանդավառ դասախոսությունները։ Թիֆլիսում Պատկանյան-գործիչն աչքի է ընկնում իր անբասիր տաղանդի նոր դրսևորումներով. 1847-ին գործուն մասնակցություն է ցույց տալիս ժամանակի համար մեծ իրադարձության՝ «Կովկաս» թերթի խմբագրական աշխատանքներին (թերթի 3 խմբագիրներից մեկն էր), իսկ 1850—1851 թթ. հրատարակում է «Արարատ» ամսագիրը՝ արևելահայոց իրականության առաջին աշխարհաբար պարբերականը։

«Կովկաս» և «Արարատ» պարբերաթերթերում Պատկանյանը տպագրել է բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված կովկասահայ իրականության օրվա հուզող խնդիրներին, առաջին հերթին հայկական դպրոցներում ուսուցման գործի կատարելագործմանը։ Այդ թերթերում տպագրվել են Պատկանյանի բանասիրական, ազգագրական, բնագիտական հոդվածները, գեղարվեստական գործերը, քաղաքացիական ազնիվ դիրքորոշմամբ գրված բանավիճային ելույթները։

Չնայած իր լուսավորական անխոնջ գործունեությանը, նա ոչ միայն չի գնահատվել ըստ արժանվույն, այլև մշտապես գտնվել է հալածականի վիճակում։ Որքան էլ այդ տարօրինակ է, Պատկանյանը թեև իր ազգանվեր գործունեության ճանապարհին գրեթե միշտ շփվել է Ներսես Աշտարակեցու հետ, չի ստացել նրա օժանդակությունը և չի խրախուսվել նրա կողմից։ Պատկանյանի կյանքն ու գործունեությունը բավականաչափ ուսումնասիրված է մեր բանասերների և պատմաբանների կողմից և մենք, իհարկե, չենք հավակնում նոր բան ավելացնել արդեն ստեղծվածին։ Սակայն, քանի որ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև Մատենադարան) արխիվում պահվող բազմաթիվ վավերագրեր լրացուցիչ լույս են սփռում Պատկանյանի և Աշտարակեցու խաճված և բարդ փոխհարաբերությունների վրա, քննության առարկա ենք դարձնում այդ գործիչների «մենամարտի» մի քանի դրվագները, դրանք դիտարկելով առաջին աղբյուրից։

1827 թ. Պատկանյանի տեղափոխությունը Հաշտարխանից Նոր Նախիջևան, գրեթե զուգադիպում է Ներսես Աշտարակեցու առաջնորդության շրջանին, և ամբողջ մեկ ու կես տասնամյակ նրանք թեև տարածությամբ միմյանցից հեռու (Ներսեսի նստավայրը Քիշնևում էր), բայց աշխատանքի բերումով գտնվում էին անմիջական շփման մեջ։ Երվանդ Շահազիզը «Տէր Գաբրիէլ Պատկանեանց» աշխատության մեջ ամենայն մանրամասնությամբ ներ-

կայացնում է այն միջավայրը, որտեղ ապրում և գործում էր Պատկանյանը։ Երիտասարդ տիրացուին և ուսուցչին, որը մի գլուխ բարձր էր կանգնած իր շրջապատից, ժամանակի մեծատունները և քաղաքի հայրերը նայում էին վերևից, փորձելով հանգցնել նրա եռանդի պոռթկումները հասարակական գործերում։ Քահանաները հանձին նրան տեսնելով ուժեղ մրցակցի, ամեն կերպ ջանում էին անվանարկել նրան։ Ստեղծվում է մի վիճակ, որ երբ 1832 թ. Ներսես Աշտարակեցին Գրիգորիուպոլ քաղաքում նրան քահանա է ձեռնադրում, Պատկանյանը վճռում է հեռանալ Նախիջևանից։ Սակայն ստացած նոր նշանակումները (և՛ մայր եկեղեցու քահանա, և՛ հոգևոր կառավարության քարտուղար), նրան հարկադրում են աշխատել Նախիջևանում։ Կարճ ժամանակից, հենց նույն 1832 թ. վերջին, քաղաքային դումայի՝ 186 ստորագրությամբ, մի դիմում է ուղարկում առաջնորդին, որով խնդրվում էր Պատկանյանին հեռացնել քաղաքից։ Այնուհետև նրա կյանքն անցնում է մշտական անախորժությունների մեջ։ Ե. Շահազիզը գրում է. առաջնորդից ստացած պաշտոնի բերումով «նա կամա, թե ակամա պիտի ամենասերտ հարաբերություն ունենար երեցփոխների, քահանաների, հոգևոր կառավարության անդամների և քաղաքի մյուս կառավարիչների հետ։ Այս էլ դեռ բավական չէր, ամեն մի կենճոտ գործ, ամեն մի փափուկ հանձնարարություն, ամեն մի անձնականություն շոշափող ու դրամական հաշվի վերաբերյալ խնդիր առաջնորդը սովորություն էր արել նորա միջոցով կատարել, նորա ձեռքով լուծել»[1]։ Այս հանգամանքը նրան պահում էր շարունակական լարվածության մեջ։ Երբ առաջնորդն աղաներին անցանկալի որևէ կարգադրություն էր անում, նրանք գրգռվում էին, դրա պատճառ համարում Պատկանյանին և բողոքներ ու ամբաստանություններ ուղարկում առաջնորդին։ Վերջինս իր հերթին «այդ բողոքներից եթե տասին չէր հավատում, տասից մեկին էլ է հավատում էր և հանդիմանություն գրում նորան, երբեմն և պատժում՝ փիլոնն առնում»[2]։ Իրավիճակը սրում էր և Պատկանյանի ըմբոստ բնավորությունը. նա չէր ենթարկվում հզորների կամքին, քրքրում, երևան էր հանում ճշմարտությունը, իսկ երբեմն էլ անձնականություն էր խառնում հասարակաց գործերին, եկեղեցու բեմից հաճախ պախարակում էր իր թշնամիներին և ջատագովում բարեկամներին[3]։

Պատկանյանը հոգնել էր ամենօրյա այդ պայքարից։ Իր գիտելիքների պաշարով, լեզուների իմացությամբ և մանկավարժական հմտությամբ նա կարող էր ուսուցչական աշխատանք կատարել Լազարյան ճեմարանում և այդ համոզմունքով քանիցս դիմում է Լազարյաններին՝ խնդրելով իրեն ուսուցչի և քահանայի պաշտոններ տալ ճեմարանում և Մոսկվայի եկեղեցում։ Լազարյանների արխիվում պահպանվել է 1842 թ. հոկտեմբերի 12-ի թվակիր նրա նամակը՝ Խաչատուր և Հովհաննես Լազարյաններին, որում ասված է. «Բազում անգամ խնդրեալ եմ ընդունել զիս 'ի հովանավորութիւն Ձերդ վեհազնութեանց վասն ծառայելոյ 'ի սուրբ եկեղեցիս մայրաքաղաքիդ, և 'ի հռչակաւոր ազգապարծանք ճեմարանի։ Այժմ ծանեայ զի և վիճակաւոր արքեպիսկոպոսն սրբազանն Ներսէս ոմի ցուցանել առ այն զիւրն համտհաճութիւն։ Վասնորոյ այսու ամենախոնարհ խնդրով հայցեմ հաղորդել ինձ զբարեհաճութիւն Ձերդ վեհազնութեան և զվճիռ իմոյ ապագայ վիճակի...»[4]։ Պատկանյանը սխալվում էր, կարծելով, թե Ներսես Աշտարակեցին համամիտ է իր ցանկությանը։ Դեռևս 1840 թ., ի պատասխան Խ. Լազարյանի հարցման, թե նա ինչ կարծիք ունի Պատկանյանի մասին, որին ցանկանում էր հրավիրել Մոսկվա, Ներսեսը հունիսի 1-ի թվակիր նամակում ասում է. «...թեպետ ճանաչի նա յայլոց գիտուն ոմն, այլ որպէս ինձ է յայտնեցեալ գոր-

1 Ե. Շահազիզ, Տէր Գաբրիէլ Պատկանեանց, Թիֆլիս, 1910, էջ 52։

2 Նույն տեղում, էջ 53։

3 Նույն տեղում, էջ 76։

4 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թղթ. 107, գործ 44, վավ. 104։

ծովք ո՛չ սխալիմ ասել, թե նա՝ է՛ անծանօթ իւրումն գիտութեան և գիտութիւն նորա՝ ամենեին անծանօթ անձին նորա։ Աղաչել պարտ է զաստուած, զի նա նոր գիտութիւն նմա շնորհեսցէ ողորմութեամբ իւրով, ապա թէ ոչ՝ գիտութիւն նորա կորուստ է անձին նորա և կորստական ընդ այն աշակերտելոց նմին»[5]։ Այնուհետև չուզենալով դուրս գալ պատշաճության սահմաններից, նա հարցի վերջնական վճիռը թողնում է Լազարյանին, իր կողմից ավելացնելով միայն, որ այն ուսուցիչները, որոնցից նա դժգոհել է անցյալում, Պատկանյանի (ապիկարության) համեմատությամբ չեն կարող նույնիսկ նրա ճկույթը լինել։

1841 թ. ապրիլի 15-ի թվակիր նամակում Խ. Լազարյանի ուղարկած՝ Գ. Պատկանյանի նամակին ծանոթանալուց հետո Ներսես Աշտարակեցին գրում է. «Զդիր սրալեզու Տէր Գաբրիէլ քահանային Պատկանեան ընթերցեալ՝ վերագարձուցանեմ ահա, որոյ զնմանօրինակն և առ իս ունի գրեալ գահանայն, անկշռադատ և անհամաձայն՝ի բանս իւր և՝ի կամս»[6]։

1842-ի նոյեմբերին Խ. Լազարյանը կրկին դիմելով առաջնորդին, խնդրում է թույլատրել Գ. Պատկանյանին մեկնել Մոսկվա և ստանձնել հայոց լեզվի ուսուցչի պաշտոնը, որով կբարելավվեր այդ առարկայի ուսուցման գործը ճեմարանում[7]։ Հավանաբար, ի պատասխան այդ նամակի, 1843 թ. մարտի 3-ի թվակիր նամակում Ներսեսը հայտնում է. «Յաղագս Տէր Գաբրիէլ քահանայի Պատկանեան կանխաւ յառաջ յայտնեալ եմ, թէ դժուարատանելի է բնութիւն նորա, և լեզու նորա անսանձ...»[8]։ Դարձյալ անդրադառնալով նրա «անհնազանդությանն» ու «անկարգությանը», նամակագիրը հայտնում է, որ Պատկանյանի՝ Մոսկվա մեկնելու խնդրանքի կապակցությամբ ինքն արդեն նրան ուղարկել է «ընդ երկար յոյժ» մի նամակ։ Այդ «յոյժ երկար», 15 լայնածավալ էջերից կազմված նամակի պատճենը Ներսեսն ուղարկում է Խ. Լազարյանին, ցրելու համար նրա պատրանքները Պատկանյան-մարդու և ուսուցչի վերաբերյալ («...ըստ որում խոստացաք քանիցս, վասն արժանաւորապէս ճանաչելոյ զգրութիւն հոգւոյ Գաբրիէլ քահանայի Սեբրեան»)։ Նամակի այդ պատճենի տակ նա իր ձեռքով ավելացրել է. «Յաղագս ուսուցչի Ձերում ուսումնարանի, խնդրեմ առ փոքր մի ևս երկայնամտեալ հանգիստ պահպանել զսիրտդ։ Եւ ես յուսամ, թէ շնորհն Աստուածայ յաջողեսցէ մեզ գտանել զոք ըստ սրտի Ձերում»[9]։ Պատկանյանի հարցն անդառնալիորեն փակված էր, և Լազարյանն ամփոփում է խնդիրը։ Նա գրում է Ներսեսին, որ գոհ է նրանից՝ Պատկանյանի մասին սպառիչ տեղեկություններ ստանալու համար. «...Եթե այնպէս դժնդակ է նա բարուք, չէ հարկաւոր մեզ՝ բերել զնա՝ի Մոսկով քաղաք»[10]։

Պատկանյանին ուղղած Ներսեսի վերոհիշյալ նամակի առիթը էջմիածնի վանքի գլխավոր կառավարիչ Բարսեղ արքեպիսկոպոսի նամակն էր, որով նա խնդրում էր Ներսես Աշտարակեցուն՝ բարելավել Պատկանյանի վիճակը[11]։ Ներսեսը միաժամանակ ստանում է և Պատկանյանի 1842 թ. սեպտեմ-

5 Նույն տեղում, վավ. 10։

6 Նույն տեղում, վավ. 31։

7 Տե՛ս Մ. Սաղյան, Պատկանյաններ, Երևան, 1982, էջ 85։

8 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թղթ. 107, գործ. 44, վավ. 121։

9 Նույն տեղում, վավ. 131։

10 Ալ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի (1824—1899), հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 474։

11 Ալ. Երիցյանը գրում է, որ պահպանվել են Պատկանյանի նամակները՝ ուղղված Սինոդի անդամներին, որոնցում նա, գանգատվելով առաջնորդի անբարյացակամությունից, խնդրում է իրեն ազատել նրա ձեռքից և տեղափոխել Թիֆլիս (նույն տեղում, էջ 475)։ Այդ մասին Մ. Սաղյանը գրում է. «Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի ֆոնդերում պահպանված Գաբրիել Պատկանյանի բազմաթիվ դիմումները, սկսած 1830 թվականից մինչև 1852 թվականը, լի են Մոսկվա, Թիֆլիս, Աստրախան տեղափոխվելու խնդրանքներով» (Մ. Սաղյան, նշվ. աշխ., էջ 85)։

բերի 15-ի թվակիր նամակը, հավանաբար, Մոսկվա մեկնելու թույլտվության խնդրանքով։ Մեկընդմիշտ դադարեցնելու նպատակով իրենց մեջ տարվող «անարժան գրագրությունները», Ներսեսը կազմում է իր տեսակի մեջ եզակի մի փաստաթուղթ՝ վերջին տարիներին Պատկանյանից ստացած և նրան ուղարկած նամակների կարևոր քաղվածքների վերաշարադրանքը։ Այդ նամակները պարունակում են առաջնորդին ոչ վայել հայհոյական արտահայտություններ, խիստ հանդիմանություններ, խրատներ ու քարոզներ։ Դրանցում նա ներկայացնում է Պատկանյան-քահանայից իր անբավականության պատճառները և փորձում հիմնավորել Մոսկվայում աշխատանքի անցնելու նրա խնդրանքի մերժումը։

Եվ այսպես, նրանց գրագրությունից հայտնի են դառնում Պատկանյանի բողոքներն ու գանգատները, որոնց Աշտարակեցին մեկ առ մեկ պատասխանում է, սառը հաշվենկատությամբ հերքում նրա փաստարկները, ընդ որում ավելի հայհոյում, քան փորձում դրանց պատասխանել ըստ էության։ Մանոթանանք այդ բողոքների բնույթին։

Մի նամակում Պատկանյանը Ներսեսին հիշեցնում է, որ նրա կողմից պատժվելու և փիլոնից զրկվելու կապակցությամբ շատ դառնություններ է հանդիպել։ Այս առիթով Ներսեսը վերաշարադրում է նրա խոսքերը. «Գրես, թէ երկիցս զրկեցայ 'ի փիլոնէ, յանշնչելի արատիս անուան իմոյ, և ժառանգեցի զբարկութիւն իմոյ արքեպիսկոպոսիդ յայն աստիճան, զի ահա քանի ամք են յորս կողկողիմ ի խնդրել զգթութիւն և ոչ լսելի լինի ձայն իմ...»։ Պատկանյանը այնուհետև գանգատվում էր այն բանից, թե հաջողության ու առաջադիմության դռները փակ են իր համար և ինքը դատապարտված է հավերժական անվանարկման ու անբախտության։ «Ցայսմիկ Նախիջեվան քաղաքի,—ասեք մարգարեանալով գրում է նա,—հատեալ են դին գըլխապարտութեան իմոյ և դատակնիք անվերջանալի հալածանաց»[12]։

Հերքելով նրա փաստարկները, Ներսեսն իր նախորդ նամակներից բերված մեջբերումներով հիշեցնում է Պատկանյանին, որ չնայած ինքը միշտ նրան խորհուրդ է տվել անբասիր կատարել պարտականությունները, բայց նա թե՛ իբրև քահանա, թե՛ իբրև հոգևոր կառավարության քարտուղար և թե՛ իբրև ուսուցիչ, ձախողել է այդ գործերը։ Պատկանյանն ինչպես պատասխան նամակներում, այնպես էլ հետագայում գրած «Նոր-Նախիջևանի պատմությունը» գրքում հետևյալ պարզաբանումներն է տալիս, որոնք ներկայացնում են իրերի իսկական պատկերը, գժտությունների պատճառները տեղում։

Երբ 1832 թ. Պատկանյանը ձեռնադրվելով քահանա, Քիշնևից վերադառնում է Նախիջևան, պարզվում է, որ քաղաքագլուխ Մարկոս Պոպովը քաղաքային դպրոցի գործերը քայքայման է հասցրել։ Նա ուսուցիչների համար նախատեսված աշխատավարձի գումարը 1000 ռուբլուց իջեցրել է 400-ի, իսկ իր հայր Սերոբեի և եղբայր Պետրոսի 400 ռ. աշխատավարձը կտրել էր այն պատճառաբանությամբ, թե Գարրիելը պետք է աշխատանքի անցնի հոգևոր կառավարության մեջ։ Սերոբե և Պետրոս Պատկանյանները, բնականաբար, թողնում են դպրոցը։ Գ. Պատկանյանը Ներսեսի կարգադրությամբ, հոգևորականների զավակների համար բացում է սեմինարիա (սերմնարան կոչված դպրոցը), որը գործում է 1832—1835 թթ. և փակվում դարձյալ սադրանքների հետևանքով։ Դրան զուգընթաց, նա իր պարտականությունները մշտապես կատարում էր նաև հոգևոր կառավարության մեջ, վարում բոլոր գրագրությունները։ Քաղաքագլխի և Պատկանյանների փոխհարաբերությունները գնալով վատանում են. 1832-ին Պոպովը կազմակերպում և առաջնորդին է ուղարկում մի նոր համախոսական, որով Նախիջևանի քաղաքացիները պահանջում էին քաղաքից հեռացնել արդեն Պատկանյանների ամբողջ գերդաստանը։ Պատկանյանը, հավանաբար, կատարել է հակաքայլեր,

12 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թղթ. 107, գործ 44, վավ. 137, էջ 2։

որոնք ավելի են խորացրել ստեղծված հակասությունները։ Պատկանյանին խանգարում էին նրա շիտակությունը, համարձակությունը, նաև, ինչպես Երիցյանն է գրում, նրա «անհանգիստ բնությունը և քանի մի խոշոր պակասությունք», որոնք չէին ներվում։ Այս ամենի հետևանքով Պատկանյանը 1836-ին առաջնորդի կողմից զրկվում է քահանայադրությունից, Ռոստովում քննություն տալով ձեռք բերում ուսուցչության իրավունք և բացում հետագայում մեծ համբավ ստացած իր երկլեզվյան մասնավոր դպրոցը։

Իրադրությունը քաղաքի հասարակական կյանքում բարդանում էր։ «Նոր Նախիջևանի պատմությունը» գրքում Գ. Պատկանյանը խոսում է 1842—1853 թթ. Նախիջևանի անփոփոխ քաղաքագլուխ Հ. Խալիբյանի զանցանքների; չարաշահումների, անբարոյական արարքների մասին։ Այդ ամենը հիմք ունենալով է, որ երբ Խալիբյանը 1842 թ. ընտրվում է քաղաքագլուխ, Պատկանյանը մի նամակով խորհուրդ է տալիս առաջնորդին, որպեսզի նա կամ անձամբ խոսի Նովոբոսիյակի և Բեսարաբիայի նահանգապետ իշխան Մ. Վորոնցովի հետ, կամ որևէ մեկին ուղարկի նրա մոտ՝ արգելելու քաղաքագլխի հաստատումը։ Այս նամակը սաստիկ զայրացնում է Ներսեսին, և նա Պատկանյանին մի ջախջախիչ պատասխան է հղում, որից քաղվածքներ են բերված հիշյալ «յոյժ երկար» նամակում։

Կարճ ժամանակից Պատկանյանը Ներսեսին նորից է զայրացնում, մի նամակով հայտնելով, թե անհնար է համարում որևէ լուրջ գործ կատարել հոգևոր կառավարության անդամների հետ, և թե ինքը գերադասում է ինքնուրույն լուծել հարցերը։ Ներսեսի պատասխան նամակից պարզվում է, որ այն բանից հետո, երբ Պատկանյանը առաջնորդին խորհուրդ էր տվել տապալել քաղաքագլխի հաստատումը (մի բան, որ Ներսեսը ամոթալի առաջարկ է համարում իր կոչման համար), առաջնորդն արգելել էր նրան ինքնուրույն որևէ քայլ կատարել, առանց պաշտոնական գործակիցների համաձայնության։ Այս պահանջը նա կրկնում է և այս նամակում։

Բնավ չխնայելով Պատկանյանի արժանապատվությունը, նրա այն խընդրանքին, թե քանի որ որդիները սովորում են Լազարյան ճեմարանում, նպատակահարմար է, որ ինքը ևս մեկնի մայրաքաղաք, Ներսեսը պատասխանում է, թե այդպիսի հորից հեռու գտնվելը բարեբախտություն է որդիների համար։ Ինչ վերաբերում է Մոսկվայում քահանայագործությամբ և ուսուցչությամբ զբաղվելու թույլտվություն տալուն, ապա միանգամայն որոշակի հայտարարում է, թե «բաւական քահանայք կան արդեն 'ի Մոսկով»։ Ուսուցչության համար նույնպես չի երաշխավորում նրան, որովհետև Աշտարակեցու համոզմամբ նա չէր կարող աշխատել ճեմարանում, քանի որ իբրև մանկավարժ չէր արդարացրել իրեն։ Դաժանության հասնող անարդարություն կար նրա մի դիտողության մեջ, որով ոչնչի էր հավասարեցվում Պատկանյան-մանկավարժի վաստակը։ «Դու ցույց մեզ,— գրում է նա,—թե ցարդ վայր քում հասակի՝ ո՛ւր ուրեք, ո՛վ ոք գտանի քո աշակերտ՝ ուսեալ 'ի քէն, զիմն ինչ»։ Դարձյալ խորհուրդ է տալիս արժանավոր գործերով աչքի ընկնել և ոչ թե «սովորական քեզ՝ սեթևեթությամբ բառից մրելով ըստ անցելոցն զսպիտակութիւն թղթոց»[13]։

Ինչո՞վ կարելի է բացատրել առաջնորդի նամակների բիրտ ոճը, նրա անթաքույց ատելությունը Պատկանյանի նկատմամբ և վերջինիս՝ գրեթե ֆիզիկապես ճզմել-ջնջելու նրա ցանկությունը։ Այս հարցի պատասխանը, կարծում ենք, միանգամայն ստույգ ձևակերպում է ստացել վերոհիշյալ վավերագրի՝ կից գրության մեջ։ Խ. Լաղարյանին ուղարկելով իր կազմած նամակմեղադրանքը, Ներսես Աշտարակեցին խոստովանում է, որ Պատկանյանին ուղղած իր նամակների միջոցով **ձգտել է դաստիարակել «զնոգի նորա և զկամս և զլեզու և զգրիչ, ըստ արժանի իւրումն քահանայական կոչման»,**

13 Նույն տեղում, էջ 17

բաց ապարդյուն, գրում է նա, որովհետև դրանք անօգուտ են անցել և իզուր աշխատանք՝ իր համար[14] (ընդգծ. մերն է—Մ. Մ.)։

Պատկանյան-գործիչը և մանկավարժը իր տաղանդի, սեփական համոզմունքների և ինքնավստահության բերումով գործում էր ինքնուրույն, և իր անկախ պահվածքով ու ըմբոստ նկարագրով զայրացնում Ներսեսին։ Վերջինիս չի հաջողվում ընկճել («դաստիարակել») հանդուգն գործչի հոգին, կամքը, լեզուն կամ գրիչը, ուստի և դիմում է իր ունեցած հզոր զենքի՝ բրոնության օգնությանը։ Աշոտ Հովհաննիսյանը հետևյալ ուշագրավ ընդհանրացումն է անում. «Կասկածամիտ ու խանդոտ Ներսեսը չէր սիրում մանավանդ «ուսումնականներին», այն մարդկանց, որոնք ունեին նրա համեմատությամբ մտավոր գերազացություն կամ կարող էին միաժամանակ պաշտպանել նրա դեմ իրենց արժանապատվությունը։ Հանդիպելով ընդդիմության, նա ջանք չէր խնայում քմայքի ու իշխանության աղորիքով փոշիացնել ըմբոստներին։ Հոգևոր տիրոջից «սրդողած»՝ փախուստով գլուխ պրծեցրին Կարապետ Շահնազարյանն ու Աբել Մխիթարյանը։ Նրանից տուժեցին Ալամգարյանն ու Սալլանթյանը, Թաղիադյանն ու Աբովյանը, Շանշյանն ու Գաբրիել Պատկանյանը։ Հալածանքի ենթարկվեց նաև վերջինիս հանդուգն աշակերտը՝ Նալբանդյանը»[15]։

Պատկանյանի վիճակի ողջ ողբերգականությունն այն էր, որ դեմ առ դեմ կանգնած էին երկու գրեթե հավասար ուժեր. Պատկանյանն առաջնորդին չէր զիջում իր տաղանդով, հոգու կորովով ու նպատակին հասնելու հետևողականությամբ, մի բան, որ հաստատվում է և Ներսեսի հետևյալ բնութագրումով. «Դու անհամաձայն և անհաւան ամենեցուն, և այլք առհասարակ անհամաձայն և անհաւան քեզ։ Եւ ի վերա այսր ամենայնի դու ջատագով քում շարաշուք ունակութեանց, և ես ամբաստան և բողոքաւոր զայնմանէ։ Դու անհաւան իմում երկայնամտութեանց, և ես անհաւան քում ինքնահաւանութեանց և մշտավտանգ շարաբանութեանց, և տղայամիտ առանձնախօսութեանց»[16]։ Ուժերի հենց այս օբյեկտիվ հաշվեկշռի գիտակցումն էլ Ներսեսին դարձնում էր անզիջող ու անարդար։

1842 թ. վախճանվում է կաթողիկոս Հովհաննես Կարբեցին։ 1843-ին ընտրվում և ապա նույն թվականի օգոստոսին Նիկոլայ Առաջինի կողմից կաթողիկոս է հաստատվում Ներսես Աշտարակեցին։ 1843-ին նա մեկնում է Պետերբուրգ, ինչպես Ե. Շահազիզն է գրում՝ «անօրինակ շքով ընդունվում կայսրից» և մի քանի ամիս մայրաքաղաքներում անցկացնելուց և բուժվելուց հետո վերադառնում Քիշնև։ 1844—1845 թթ. նա շարունակում է ապրել Քիշնևում, ապա Ղրիմում և վերջապես նոյեմբերի սկզբին Կովկաս մեկնելուց առաջ մտնում է Նոր Նախիջևան։ Դեռ քաղաք չհասած, նրան Տագանրոգին մոտ գտնվող փոստային կայանում դիմավորում են Խալիբյանը, Խրոմաճյանը և այլք («գլխավորապես Պատկանյանի հակառակորդները»), որոնք մեծ պատիվներ են տալիս նորընտիր կաթողիկոսին և մեկ օր անց նրան ուղեկցում քաղաք։ Ահա այդ հանդիպման ժամանակ էլ, գրում է Ե. Շահազիզը, «երբ Խալիբը բոլոր ժամանակ նստած է լինում կաթողիկոսի կառքում, վճռվում է ամեն բան —և՛ տէր Գաբրիելի տեղափոխվելը Թիֆլիս, ...և՛ առաջնորդական գործակատարության պաշտոնի և եկեղեցական գումարների Խալիբին հանձնվելը և այլն և այլն»[17]։

Ներսես Աշտարակեցին դեռևս երկու տարի առաջ, 1843-ի վերջերին, Մոսկվայից «պատվեր է ուղարկում իրան, Պատկանյանցին, թե թող նա

---

14 Նույն տեղում, վավ. 131։

15 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք I, Երևան 1955, էջ 48։

16 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թղթ. 107, գործ 44, վավ. 137, էջ 8։

17 Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 81։

պատրաստ լինի յուր արածների արժանի վարձն ստանալու»[18]։ Իսկապես, Նախիջևան հասնելու հաջորդ օրն իսկ՝ «կաթողիկոսի հրամանով ատյան է կազմվում և Պատկանյանցն առավոտյան ժամը 10-ին կոչվում է դատի, որ պիտի լիներ քաղաքի բոլոր մեծամեծների ներկայությամբ և հատուցաներ նորա արածների արժանի վարձատրությունը»[19]։ Չարժե մեկ առ մեկ հիշել Պատկանյանին ներկայացված մեղադրանքները, որոնք հիմնականում կապվում էին նրա անհնազանդ լինելու, «սանձակոտոր ու ամեհի» բնավորության և, մասնավորապես, էջմիածին ուղարկած մի նամակի հետ, որում նա գանգատվել էր Ներսեսի անբարյացակամությունից։ «Այս դատին արդասիքն այս եղավ,—հետագայում գրել է Պատկանյանը,—որ Տէր Գաբրիէլն Թիֆլիս հեռացնելու որոշումն եղավ»[20]։ Այս օրերին, թերևս Պատկանյանին հանգստացնելու դիտավորությամբ, նորընտիր կաթողիկոսը նրան ասում է. «Դու ինձ պետք ես Կովկասում. Ներսիսյան դպրոցը քեզ պիտի հանձնեմ»[21]։ 1846 թ. հունվարի 20-ին Պատկանյանն ընտանյոք թողնում է Նոր Նախիջևանը։

Պատկանյանի Թիֆլիս տեղափոխվելու վերաբերյալ հայտնվել են միանշանակ և, անշուշտ, ճշմարիտ այն կարծիքները, որ Ներսեսը, կանխամտածված, քաղաքի մեծամեծներին ազատելու համար Պատկանյանի «անհարմար» հարևանությունից, նրան «հեռացնում է Նախիջևանից» (կամ՝ «փոխադրում Թիֆլիս», և կամ՝ «քշում Թիֆլիս»)։ Ճիշտ է, հայ բանասերներն ու պատմաբանները այդ տեղափոխությունն անուղղակիորեն ընդունում են իբրև աքսոր, բայց միայն Շահազիզի գրքում է այդ իրողությունն ստացել իր պաշտոնական, իրավական որակումը։ 1853 թ. սեպտեմբերի 23-ին Հարությունն Խալիբյանը քննիչին ներկայացրած ցուցմունքում գրել էր, որ Պատկանյանին ինքը երբեք չի հալածել կամ սպառնացել, այլ «կարելի է ասել,—գրում է նա,—որ ես եղել եմ նորան բարյացակամ և բարերար, որովհետև նա երբ 1845 թվին հայոց կաթողիկոսի հրամանով արտաքսվեց Նախիջևանից Թիֆլիս, ես էի, որ հասարակության խնդիրքով միջնորդեցի վեհափառ կաթողիկոսի առաջ՝ նորան նորից Նախիջևան վերադարձնելու»[22]։ Այս ամենից հետո միանգամայն տրամաբանական է դառնում և այլևս տարակուսանքներ չի հարուցում Պատկանյանի՝ «աքսորականի» վիճակը Թիֆլիսում։ Այստեղ նա առաջին տարիներին մնում է առանց աշխատանքի։ Ներսես Աշտարակեցին չի կատարում նրան տված խոստումը. ավելին, երբ մանկավարժական աշխատանք կատարելու հնարավորությունն է բացվում ռուսական դպրոցներում, և տեղի դպրոցական գործերի հոգաբարձու Սեմյոնովը խնդրում է՝ Պատկանյանին թույլատրել աշխատելու որպես կրոնուսույց, կաթողիկոսը նրա փոխարեն ուղարկում է երկու այլ ուսուցիչների։ Ընտանիքի կարիքները հոգալու համար Պատկանյանն իր եղբոր՝ Միքայել Պատկանյանի հետ մասնավոր դպրոց է հիմնադրում։ Նա միաժամանակ աշխատակցում է «Կովկաս» թերթին՝ 1847-ից դառնալով խմբագրական մարմնի անդամ։ Այս օրերի մասին Ալեքսանդր Երիցյանը գրում է. «Այստեղ ևս Տէր- Գաբրիելը չարժանացավ Հայրապետի շնորհաց։ Մանավանդ թե Վեհի անբավականությունն ավելի ևս մեծացավ, երբ Տեր Գաբրիելը աշխատակցելով նորաբողջ «Կովկաս» հայոց լրագրին, 1847 թվին բանակռիվ մտավ ռուսաց Բողոմոլով քահանայի հետ և անպատվեց սորան հիշյալ թերթում։ Հետևանքը, որպես հայտնի է, այն եղավ, որ իշխան Վորոնցովի դատավճռով Տեր-Գաբրիելը 100 ռուբլի տուգանքի ենթարկվեց, իսկ «Կովկաս» հայ լրագիրն ստիպվեցավ դադարիլ»։ Այնուհետև կաթողիկոսը կարգադրում է թույլ չտալ Պատկան-

18 Նույն տեղում, էջ 78։

19 Նույն տեղում, էջ 81։

20 Գաբրիել Պատկանյան, Նոր-Նախիջևանի պատմությունը, Նոր-Նախիջևան, 1917, էջ 112։

21 Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ 84։

22 Նույն տեղում, էջ 98։

յանին մտնել Ներսիսյան դպրոց։ Խոլերայի պատճառով դպրոցը մեկ տարով փակված էր։ Այն բացվում է 1848-ի ամռանը, և նոր վերատեսուչ հաստատված Կարապետ Շահնազարյանը Պատկանյանին հրավիրում է հայոց լեզու դասավանդել բարձր դասարաններում։ Լսելով այդ մասին, Ներսես Աշտարակեցին վրդովվում է։ Դպրոցի նորընտիր խորհրդարանը նրան ուղղած նամակում հայտնում է, որ այդ վճիռը կայացվել է «հարկից ստիպված, որովհետև ներկայումս չկա Թիֆլիսում ոչ ոք հիմնավորապես դիտացող այդ լեզուն և որ կատարելապես համապատասխաններ աշակերտաց այն հառաջադիմության, որ կսպասե խորհրդարանս»[23]։

1849 թ. վերջին միայն Պատկանյանը նշանակվում է Նորաշեն եկեղեցու ավագ քահանա։ 1849-ի ամռանը Շահնազարյանն իր դիմումի համաձայն ազատվում է Ներսիսյան դպրոցի վերատեսչի պաշտոնից։ Նրա փոխարեն մի քանի ամիս աշխատում է Պետերբուրգից հրավիրված Պետրոս Շանշյանը։ Վերջինիս հրաժարականից հետո միայն, դպրոցի հոգաբարձուներ Ի. Արղությանի, Գ. Մանդինյանի և Դ. Խերոդինյանի խնդրանքով, 1850 թվի հունվարից Ներսեսը Պատկանյանին նշանակում է դպրոցի տեսչի պաշտոնակատար։ Նույն թվականի սեպտեմբերից Պատկանյանը սկսում է հրատարակել «Արարատ» շաբաթաթերթը, բայց հենց այդ ժամանակ էլ հարկադրված է լինում փակել իր մասնավոր դպրոցը, քանի որ, ինչպես գրում է Ե. Շահազիզը, «Կաթողիկոսը գանգատվում էր, որ նորա մասնավոր դպրոցն արգելք է լինում նորան բոլորովին նվիրվել «Ազգային հոգևոր դպրոցին»։ Նա մինչև իսկ անբավական էր, որ նա խմբագրում էր «Արարատը» և սորան-նորան ասում էր, թե նա ավելի զբաղված է «Արարատի» սրբագրությամբ, քան թե դպրոցի գործերով»[24]։

Մինչ այս փոփոխությունները տեղի կունենային, 1849 թ., երբ Պատկանյանի վիճակը դեռևս չէր կարգավորվել, նա դիմում է Նախիջևանի իր բարեկամներին՝ իրեն Նախիջևան կանչելու խնդրանքով։ Պատկանյանի յուրայինները քաղաքագլուխ Խալիբյանի ստորագրությամբ համապատասխան դիմում են կազմում և ուղարկում կաթողիկոսին։ «Սակայն մեկ տարի անց,— գրում է Մ. Սաղյանը,— երբ արդեն սկսվել էր քահանայի երկար տարիների բաղձանք «Արարատի» հրատարակությունը, երբ նա վերջապես ստանձնել էր Ներսիսյան դպրոցի տեսչությունը, իհարկե, այլևս չէր կամենում տեղափոխվել Նախիջևան։ Եվ հենց այդ ժամանակ, պատրվակ բռնելով մի անախորժ դեպք տեսչի կրտսեր եղբոր՝ ռուսաց լեզվի ուսուցիչ Միքայել Պատկանյանի և ստորին դասարանի դասատու և վերակացու Ռափայել Պատկանյանի միջև, կաթողիկոսը մտաբերում է մեկ ու կես տարի առաջ ստացած խընդրագիրը և փութով ճամփում Գաբրիելին Նոր Նախիջևան՝ ընդառաջ նորանոր փոթորիկների»[25]։ Նա կարծես ուրախանում է, «որ կարող է այդպիսով ազատվել նորանից», գրում է Ե. Շահազիզը[26]։ 1851 թ. ապրիլին Պատկանյանը լույս է ընծայում «Արարատի» 33-րդ համարը և մեկնում Թիֆլիսից։ Գաբրիել Պատկանյանը հայրենի քաղաքն է հասնում 1851-ի հունիսին, եկեղեցական գումարների շուրջ բորբոքված կռիվների ամենաթեժ պահին և իրեն հատուկ եռանդով նետվում է պայքարի մեջ։

Հայրապետյան կուսակցության ուժեղացումը դրդում է Խալիբյանին լուրջ միջոցներ ձեռնարկել և նա, 1853 թ. ամռանը, իր կյանքի դեմ մահափորձ կազմակերպելու կեղծ մեղադրանքով, ձերբակալել է տալիս Պատկանյանին։ Ամբողջ յոթ տարի Պատկանյանն անց է կացնում Ռոստովի բանտում, այնուհետև մի կարճ միջոց հսկողության տակ ապրում է Նախիջևանում, բայց Խալիբյան—Գ. Այվազովսկի խմբակցությանը հաջողվում է նրան

23 Ա ն. Ե ր ի ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 475—476։
24 Ե. Շ ա հ ա զ ի զ, նշվ. աշխ., էջ 85։
25. Մ. Ս ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 90։
26 Ե. Շ ա հ ա զ ի զ, նշվ. աշխ., էջ 86։

վտարել տալ քաղաքից։ 1863 թ. աղատվելով աքսորից, Պատկանյանը բնակություն է հաստատում որդիների մոտ, Պետերբուրգում, ուր անց է կացնում կյանքի վերջին 26 տարիները։ 1853 թ. ավարտվում է Գ. Պատկանյանի հասարակական-լուսավորական արգասավոր գործունեությունը։ Հետագայում Ռոստովի բանտում և աքսորում նա մշտապես զբաղվում է գրական աշխատանքով և ստեղծում գեղարվեստական բազմաթիվ գործեր (հիմնականում աշխարհաբար) և պատմական-հրապարակախոսական աշխատություններ ու հոդվածներ[27]։ Պետերբուրգում նույնպես նա զբաղվում է գրական աշխատանքով, օգնում Ռ. Պատկանյանի հիմնադրած «Հյուսիս» շաբաթաթերթի հրատարակության գործին։

Պատկանյանի աքսորի վերջին շրջանում Մատթեոս կաթողիկոսը դիմելով Կովկասի փոխարքային, խնդրում է նրա միջնորդությունը կայսեր առաջ՝ աքսորից ազատ արձակելու Պատկանյանին և վերականգնելու նրա քահանայական իրավունքը։ Երբ դիմումը հասնում է փոխարքային, Պատկանյանն արդեն ազատության մեջ էր գտնվում, ուստի, քննելով երկրորդ խնդրանքը, փոխարքան անհարմար է գտնում այդ հարցով դիմել Ալեքսանդր Երկրորդին, քանի որ նրա անմիջական կարգադրությամբ էր Պատկանյանը կարգազուրկ արվել[28]։

Այդ նամակում Ներսեսին հաջորդած Մատթեոս կաթողիկոսը հետևյալ կերպ է բնութագրում Գաբրիել Պատկանյանին. «Ունելով զլայնածաւալ գիտութիւնս, գոլով քաջ հայկաբան, հմուտ՝ գրականութեան, լեզուին ռուսաց. հորինող և թարգման բազում օգտաւետ մատենից, հազվագիւտ ճարտասան, պոետ և շնորհազարդ մատենագիր, նա չկարէ բերել զօգուտ ինչ մարդկութեան 'ի ներկա բնակութեան իւրում և ձիրք նորա կորնչին ի զուրս, մինչ... կարէ նա ցուցանել զմեծամեծ ծառայութիւնս և զօգուտ հայկազանց 'ի գործս ազգային լուսաւորութեան»[29]։ Ազգային լուսավորության գործին Պատկանյանն արդեն չէր կարող անմիջականորեն մասնակցել, բայց կյանքի վերջին շրջանում ստեղծած գրական գործերով և մասնավորապես իր «Յիշատակարանով» նա մեծ ծառայություն է մատուցել հայ գրականությանն ու բանասիրությանը։

1889 թ. վախճանվում է Գաբրիել Պատկանյանը։ Այդ առիթով գրած «Տէր-Գաբրիէլ Պատկանեան» հոդվածում Ալ. Երիցյանը հայ գործչի տեղի և դերի պարզաբանումից հետո սրամիտ մի ընդհանրացում է կատարում, որի մեջբերումով էլ ավարտում ենք մեր խոսքը «Կովկասի» առաջին խմբագրի բարդ ճակատագրի մասին։ «Ներկա բոպեին... եթե մեկը հարցաներ, թե ո՞վ է ննջում այս թարմ շիրիմի մեջ, կպատասխանեինք՝ «Դա է Սերոբէ վարժապետի որդին, Ալամգարյանի դասընկերը, Նալբանդյանի վարժապետը, «Արարատ» ամսագրի խմբագիրը, պրոֆեսոր Քերոբեի հորեղբայրը և մեր բանաստեղծ Ռափայելի (Գամառ-Քաթիպայի) հայրը։ Այսքանը բավական չէ՞ արդյոք Տէր-Գաբրիէլ Պատկանեանին ճանաչելու համար»[30]։

Թե՛ Մատթեոսի նամակը, և թե՛ Ալ. Երիցյանի հոդվածը Պատկանյանի վաստակի ճանաչման կարևոր և օբյեկտիվ վավերագրեր են։ Ներսես Աշտարակեցին, սակայն, Պատկանյանի մասին ունեցած իր կանխակալ կարծիքները կազմել էր նախ՝ Սերոբե Պատկանյանի նկատմամբ ունեցած անբարյացակամության, ապա թեմում իր առաջնորդության տարիներին կուտակված հոգսերի, նախիջևանցիների բախումների ու գժտությունների բազմա-

---

27 Գ. Պատկանյանի գրական գործերը և հրապարակախոսական հոդվածները հանգամանորեն վերլուծված են բանասիրական գիտությունների դոկտոր Շ. Նազարյանի «Գաբրիել Պատկանյանի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը (1830—60-ական թթ.)» օգտաշատ ուսումնասիրության մեջ (1956 թ.)։

28 Պատկանյանի քահանայական իրավունքները վերականգնվում են միայն 1878 թ.։

29 Արձագանք, 1889, № 15, էջ 232։

30 Նույն տեղում, էջ 233։

շերտ հիմքի վրա։ Իբրև առաջնորդ, նա չփորձեց վերափոխել կենցաղային մանրախնդիր ասեկոսեների անառողջ մթնոլորտը և ղեկավարվել առդարության չափանիշներով։

Արդեն կաթողիկոսության հեղինակավոր աստիճանին հասած Ներսես Աշտարակեցու գործունեության անփառունակ էջերից դարձան Պատկանյան-բազմահմուտ մանկավարժի վտարումը Ներսիսյան դպրոցից և արդեն որոշակի հաջողությունների հասած արևելահայ մեր միակ թերթի դադարեցումը։ Նա, իհարկե, լավ դիտեր, որ դպրոցն ու մամուլը ազգային լուսավորության խթանման հիմնական նախադրյալներն էին։ Դիտեր և, այդուհանդերձ, դրանք ստորադրում էր իր՝ իշխողի քմահաճույքներին։ Այս իրավիճակը նկատի ունեին Ռափայել Պատկանյանն ու Միքայել Նալբանդյանը, որոնք Գաբրիել Պատկանյանի աքսորի տարիներին իրենց գեղարվեստական գործերում իրարից անկախ արձագանքել են այս տխուր իրողությանը։ Այսպես՝ իր «Դև Մբուս» (1855 թ.) ազգային ավանդության մեջ Ռ. Պատկանյանն Աշտարակեցուն ներկայացնում է իբրև դժոխքի դևերից մեկը, որը, մտնելով Հայաստան աշխարհը, կարճ ժամանակամիջոցում մարդկանց լարում է միմյանց դեմ, տեղիք տալիս կռիվների ու խառնակության։

Միքայել Նալբանդյանը «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետում (1858 թ.) ի թիվս ժամանակի այլ գործիչների, քննադատել է նաև Ներսես Աշտարակեցու գործունեությունը, որն ամբողջությամբ վերցրած համարում է ծառայություն՝ հանուն դժոխքի փառքի։ Եթե մեղմելու լինենք «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսի» ժանրին բնորոշ պամֆլետային տարրերը, դարձյալ չի կարելի չնկատել, որ Ներսեսին ներկայացվող մեղադրանքների հիմքում ընկած են միանգամայն ռեալ փաստեր։ Նալբանդյանն առաջին հերթին ընդգծում է նրա խռովասիրությունը, նշում, որ եթե նա մի տեղ խռովություն է նկատել, ջանացել է վեճը, կռիվն ու բողոքները բորբոքել։ Մի կողմ թողնելով մնացած ծանր մեղադրանքները, որոնք դուրս են մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներից, կուզենայինք ընդգծել դրանցից վերջինը։ Նալբանդյանը գրում է. «Դորա ծայրագույն Բրամին դառնալուց հառաջ, լավ ու վատ կային դպրոցներ, ուր մի քանի բան սովորում էին, բայց այն օրից, երբ սա ստացավ ծայրագույն իշխանությունը, նախանձավոր լինելով դժոխքի փառքին, քանդեց և կործանեց այդ վարժատունքը, ցրվեց աշակերտքը, հալածեց վարժապետքը...»[31]։ Պարզ է, իհարկե, որ ուսուցչի հիշատակությամբ Նալբանդյանն ակնարկում էր Գաբրիել Պատկանյանին, որն այդ օրերին փակված էր Ռոստովի բանտում։

Անդրկովկասի առաջին հայ պարբերաթերթը՝ «Կովկասը», դադարեց ցարական վարչական ապարատի կամայականության հետևանքով. «Արարատի» դադարեցումը կապված էր «տեղական», հայկական «հանգամանքների» հետ։ Նորաստեղծ հայ մամուլի ճակատագիրն այսպիսով կախված էր և՛ Կովկասի փոխարքայության վարչարարների «մեծահոգությունից», և՛ ֆեոդալական ժամանակներից ժառանգություն մնացած դոգմատիկ հասկացությունների դեմ մղվելիք պայքարի ելքից։

Գաբրիել Պատկանյանը՝ մեր առաջին բազմակողմանիորեն զարգացած և լուսամիտ խմբագիրը, մենակ էր և անզոր՝ երկու ճակատի դեմ տարվող պայքարում։ Նոր ժամանակներում գործելու և հաղթելու համար անհրաժեշտ էին նոր տիպի գործիչներ, որոնք, ձերբազատված անցյալի կղերապահպանողական աշխարհայացքի պարտադրող պայմանականություններից, ունենային եվրոպական չափանիշների գիտական մակարդակ և պայքարող մարտիկի առանձնահատուկ կոփվածք։ Այդ հատկանիշներով էին օժտված 1850-ական թվականների հայ լուսավորիչները, որոնք պետք է փոխարինեին Գաբրիել Պատկանյանին։

---

31 Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1979, էջ 378։

ГАБРИЭЛЬ ПАТКАНЯН И НЕРСЕС АШТАРАКЕЦИ

М. А. МХИТАРЯН

Резюме

Армянский общественный деятель и педагог первой половины XIX века Габриэль Патканян всегда был в центре армянской общественной жизни и своей деятельностью во многом способствовал повышению культурного уровня армянского народа. Живя в Тифлисе, он посвятил себя журналистике, принимал активное участие в редактировании газеты «Ковкас», а в 1850—1851 гг. на новом армянском языке (ашхарабаре) издавал газету «Арарат».

Однако несмотря на то, что Патканян развернул широкую просветительскую деятельность, он всегда подвергался гонениям и не находил поддержки со стороны Нерсеса Аштаракеци, являвшегося в те годы духовной главой Бессарабской и Ново-Нахичеванской епархии, а впоследствии—католикосом всех армян. Привлеченные новые архивные документы способствуют глубокому осмыслению сложных взаимоотношений между Г. Патканяном и Нерсесом Аштаракеци.

GABRIEL PATKANIAN AND NERSES ASHTARAKETSI

M. H. MKHITARIAN

Summary

Armenian public figure and teacher of the first part of XIX c. Gabriel Patkanian was always in the centre of Armenian social life and with his activity largely promoted the rise of cultural level of Armenian people. Living in Tiflis, he devoted himself to journalistics, took active part in editing of the paper "Kovkas" and in 1850—1851 published the paper "Ararat" with new Armenian language (ashkharhabar).

However, notwithstanding that Patkanian began a great instructive activity, he was always subjected to persecutions and didn't find support by Nerses Ashtaraketsi, who was in those years religious head of Bessarabian and New-Nakhidjevan bishopric and afterwards catholicos of all Armenians. Attracting new files promote the deep sense of complex relations between G. Patkanian and Nerses Ashtaraketsi.